ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2021 թվականի N 332

ԱԼԼԱ ԱՐԱՄԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշմամբ հաստատված «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգի» 3-րդ կետի 3-րդ ենթակետով և 18-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ ԱԱ/15.4/23384-2021 գրությունը և Ալլա Արամի Պողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Ալլա Արամի Պողոսյանին 2021 թվականի սեպտեմբերի 10-ից նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-29) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև մրցույթում հաղթող ճանաչված անձին այդ պաշտոնում նշանակելը:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 120 000 (հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3.Աշխատանքային գործառույթները՝ համաձայն համայնքային ծառայության պաշտոնի անձնագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 9
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» սեպտեմբերի 2021թ. № 333

ԱՐՄԱՆ ՌԱԶՄԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՍՈՒՍԱՆՆԱ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 55-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռազմիկ Հարությունի Հարությունյանի մահից հետո Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06-006-0007-0076 կադաստրային ծածկագրով հողամասը և դրա վրա գտնվող շինությունները ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի վկայագրով փոխանցվել են Սուսաննա Բենիամինի Մաթոսյանին և Արման Ռազմիկի Հարությունյանին, սակայն նախկինում չեն հասցեավորվել, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածքի ծածկագիր՝ 060063W7WOQYN), Արման Հարությունյանի և Սուսաննա Մաթոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արման Ռազմիկի Հարությունյանին և Սուսաննա Բենիամինի Մաթոսյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով փոխանցված՝ Սպիտակ համայնքում գտնվող 06-006-0007-0076 կադաստրային ծածկագրով 0,22 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրել «ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 400» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» սեպտեմբերի 2021թ. № 334

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԷՄԻՆԻ ԴԱՐՉԻՆՅԱՆԻ ԸՍՏ ԿՏԱԿԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 55-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անուշավան Սամսոնի Դարչինյանի մահից հետո Սպիտակ համայնքի Պանրագործների թաղամասում գտնվող 06-006-0051-0003 կադաստրային ծածկագրով հողամասը և դրա վրա գտնվող շինությունները ըստ կտակի ժառանգության իրավունքի 2021 թվականի սեպտեմբերի 6-ի վկայագրով փոխանցվել են Անուշավան Էմինի Դարչինյանին, սակայն նախկինում չեն հասցեավորվել, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածքի ծածկագիր՝ 06006VOQSYMM), Անուշավան Էմինի Դարչինյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Անուշավան Էմինի Դարչինյանին ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրով փոխանցված՝ Սպիտակ համայնքի Պանրագործների թաղամասում գտնվող 06-006-0051-0003 կադաստրային ծածկագրով 0,117 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրել «ք.Սպիտակ, Պանրագործների թաղամաս, թիվ 249» հասցեն (փոստային դասիչը՝ 1806):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 10
ք.Սպիտակ